ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 792 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի N 528-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Արփի լիճ» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՀՎՀՀ՝ 05536278) կողմից կնքված՝ ստորև նշված եռակողմ պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2023 թվականի օգոստոսի 3-ի «Արփի լիճ» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող «Բնապահպանական պայմանների բարելավում» ծրագրի մասին» N 528-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Մաքս Օիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 02662703) 2023 թվականի սեպտեմբերի 29-ին կնքված՝ N ԿԲՀ-ԱԱՊ-ԳՀ-ԱՊՁԲ-23/05-2 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի հոկտեմբերի 25-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ն ընկած

ժամանակահատվածում դիզելային վառելիքի ձեռքբերում՝ 461,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Նիկա-Կատրին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 05536981) 2023 թվականի սեպտեմբերի 8-ին կնքված՝ N ԿԲՀ-ԱԱՊ-ԳՀ-ԱՊՁԲ-23/04-1 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի հոկտեմբերի 25-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում սեղմված բնական գազի ձեռքբերում՝ 1,100,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Արպանիվ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 09209297) 2023 թվականի սեպտեմբերի 8-ին կնքված՝ N ԿԲՀ-ԱԱՊ-ԳՀ-ԱՊՁԲ-23/04-2 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի հոկտեմբերի 25-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում ավտոմեքենաների անիվների ձեռքբերում՝ 414,000 դրամի չափով առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

16.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ